

2873

ԱՐԱԿԱՆԱՐԴԻԿԻ
ՔԵՐԱԿՈՎՈՒՐԻ



491.99-5

5-35

984

491.99-5
Մ-35

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



ՀՐԱՍՈՐՈԿԻՉ

ՎԱՀՐԱՄ Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

2002

مارف نظارت جبله سنك ٦٠٧ نوسروی رخصته طبع او المشدر



Կ. ՊՈԼԵԱ-ՀԱՎԱՐ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1895

2010

984



Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ա Կ Ա Ն

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳՈՅԱԿԱՆ

Կարդացե՛ք այս ժերականութեան ԱՌԱՋԻՆ
ՄԱՍԻ յառաջաբանը:

Վ.Հ.ՀՐԱՄ

94281-ԱՀ



815-2004

Ուսուցիչը. — Տղա՛քս, մէկ քանի կենդանիի
և մէկ քանի իրե անունները ըսէք :

— Ռյիսար, այծ, սեղան, գիրք, մատիս,
մուկ և այլն :

Ո. — ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ մէջ ի՞նչ կըսուին
այս անունները :

— ԳՈՅԱԿԱՆ կ'ըսուին :

Ո. — Տղաքս, ուշադրութիւն ըրէք եւ աղէկ
միտքերնիդ պահեցէք :

Գոյական կը նշանակէ գոյութիւն ունեցող :
Բան մը որ կայ, տեսնենք կամ չ'տեսնենք,
անուն մը ունի, որուն կըսենք Գոյական :

Ուրեմն, որ եւ է բանի մը անոն նը գոյական
է :

- Ո. — Ըսէ՛ք, ի՞նչ է գոյականը :
| — Որ եւ է բանի մը անոն նը գոյական է :
Ո. — Ի՞նչ կը նշանակէ գոյական :
| — Գոյութիւն ունեցող :

Ո. — Ուրեմն գոյական է այն բառը, որ ա-
նուն մ'է անձի (մարդո), կենդանիի, տեղի
կամ իրի :

ՕՐԻՆԱԿ. — Յովիաննես, ձի, պարտեզ, գրիչ :
Յովիաննես գոյական է, վասն զի անձի մը ա-
նուն է :

Ձի՝ գոյական է, վասն զի կենդանիի մը անուն է :
Պարտեզ՝ գոյական է, վասն զի տեղի մը անուն է :
Գրիչ՝ գոյական է, վասն զի իրի մը անուն է,

ՀՐԱՀԱՆԳ. 1.

Դրեցի՛ մեկ խնի անձի անուններ :
(Ըսէ՛ք, ի՞նչ ազգականներ կրնավ ունենալ) :
Դրեցի՛ մեկ խնի կենդանիի անուններ :
Դրեցի՛ մեկ խնի տեղի անուններ :
Դրեցի՛ դասարանի, սենեակի, խոհանոցի մեջ
գտնուած իրերու անուններ :

Դրեցի՛, ի՞նչ հազած էֆ, ի՞նչ ունիֆ ձեր վրայ
եւայլն :

- Ո. — Ըսէ՛ք, ի՞նչ կ'ըսուին այդ անունները,
— Այդ անունները կ'ըսուին . . .

Ո. — Ի՞նչո՞ւ համար :
— Վասն զի . . .

ՀՐԱՀԱՆԳ. 2.

Պատկերներու վրայ նայելով նախաղասութիւններ
կազմեցէ՛ք եւ գոյականներու ներքեւ զիծ քաշեցէք :



Ի՞նչ կը տեսնէք . . .


Ի՞նչ կընէ աղիկը . . .

Ուր —

Ի՞նչ կը տեսնէք . . .

Ի՞նչ կընէ տղան . . .

Ի՞նչ կը կարգայ . . .



ՀՅԱՀԱՆԳԻ

Նկարագրեցէ՞ք եւ զոյականներու ներքեւ զիծ քաշ-
չեցէք :



Ի՞նչ կը տեսնէք. — Ի՞նչ կայ պարսէզին մէջ . . .
Ի՞նչ կ'անցնի ծառերու մէջէն . . . Ո՞ր կենդանիները կը
ճանչնաք . . . Կրնա՞ք ըսել , ո՞ր կենդանիները վայրի
եւ որո՞նք բնաանի են :



Պատկերներու վրայ նայելով ըսէ՞ք զոյական ա-
նունները :
Որոշեցէ՞ք միավանկ (մէկ վանկով) բառերը եւ
զրեցէ՞ք մէկ սիւնակի մէջ :
Երիվանկ (երկու վանկով) բառերը վանկերու բաժ-
նեցէ՞ք :

ՕՐԻՆԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Տղայ՝ զոյական է, վասն զի անձի անուն է:
Աղջիկ՝ զոյական է, վասն զի անձի անուն է:
Պարտէկ՝ զոյական է, վասն զի տեղի անուն է:
Թողութ՝ զոյական է, վասն զի կենդանիի ա-
նուն է:
Ծառ՝ զոյական է, վասն զի իրի անուն է:

Բ Ա Յ

Ուսուցիչ. — Դրեցէք, աղջիկը գետինը Կ'ԱԽԼԵ:
(Կը գլւեն) Աղջիկը գետինը Կ'ԱԽԼԵ:

Ո. — Ո՞ր բառը անձ և ո՞ր բառը իր կը ցուցնէ :

— Աղջիկը ԱՆՁ և գետինը ԻՐ կը ցուցնէ :

Ո. — Ո՞ր բառը աղջկան մէկ գործը կամ գործողութիւնը կը ցուցնէ :

— Կ'ԱԽԼԵ՝ աղջկան մէկ գործը կամ գործողութիւնը կը ցուցնէ :

Ո. — Բաէք, ի՞նչ կը գործէ տղան կամ գործողութեան մէջ կը գործի դպրոցին մէջ :

— Կը կարդայ, կը գրէ . կ'երգէ, կը խօսի, կը խաղայ, կը սորվի, և այլն :

Ո. — Տղան կարդալու, գրելու գործողութեան մէջ է, ըստելու տեղ, ի՞նչ կը սենք .
Կը կարդայ, կը գրէ՝ այնպէս չէ:

— Այս,

Ո. — Բաէք ուրեմն կը կարդայ, կը գրէ,
կը խաղայ բառերն ի՞նչ կը ցուցնեն :
— Գործողութիւն:

Ո. — Տղաքս, գիտցէք որ բոլոր գործողութիւն այսինքն ընել կամ ըլլալ ցոյց տուող բառը ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ մէջ ԲԱՅ կ'ըսուին :


Ո. — Բաէք ո՞ր բառերը բայ կ'ըսուին :
— Բոլոր գործողութիւնն ցոյց տուող բառերը բայ կ'ըսուին :

ՕՐԻՆԱԿ. — Զապէլ գլուխը կը սանսրէ . Պօղոս երեսները կը լուայ :

Կը սանսրէ բայ է եւ կը ցուցնէ թէ ի՞նչ կ'ընէ Զապէլ :

Կը լուայ բայ է եւ կը ցուցնէ թէ ի՞նչ կ'ընէ Պօղոս :

Բայ կը նշանակէ խօսի, որովհետեւ բայն է որ գոյականին վրայ բան մը կ'լսէ՝ անոր մէկ գործողութիւնը կամ վիճակը կը ցուցնէ :



ՀՐԱՀԱՆԳ 4.

Բաէք, ի՞նչ կ'ընեն տան մէջ, խոհանոցին մէջ, դաշտին մէջ :



ՀԲԱՀԱՆԳ 5.

Պատկերներուն վրայ նայելով նախադասութիւններ կազմեցէք :

Առանց բայի նախադասութիւն չըլլար :
Հսէք, որո՞նք ի՞նչ կ'ընեն օդին, ջուրին, անտառին մէջ :

ՀԲԱՀԱՆԳ 6.

Դոյականներու ներքեւ մէկ գիծ, բայերու ներքեւ երկու գիծ քաշեցէք :



ՀԲԱՀԱՆԳ 8.

Այն տեսակ գոյականներ գտէք որ հետեւեալ բայերուն մեծ մասը յարմարի : Այսպէս.


Մարդը

Կ'ուտէ, կը խմէ, կը նայի, կը խօսի, կը գրէ, կը կարդայ, կ'երգէ, կը պոռայ, կը փչէ, կը նուազէ, կուլայ, կը ծիծաղի, կը խնձայ, կը հազայ, կը փոնքտայ, կը բալէ, կը ևսի, կ'իյնայ, կը կանգնի, կը պառկի, կը վազէ, կը շարժի, կը ցատկի, կ'իշնէ, կը դահի, կը տնայ, կը պտրի, կը խոնարհի, կը ծոհի, կը տղայ, կը զարնէ, կը զլորի, կը ծեծէ, եւայլն:

ՀԲԱՀԱՆԳ 8.

Հսէք ի՞նչ կ'ընէ .





Կարապը



Ձուկը



Եղը




Նապաստակը



Երկաթագործը



Մայրը



Ո. — Աչ միայն մատդիկ կամ կենդանիք զոր-
ծողութեան մը մէջ կ'ըլլան , այլ եւ իրերն ալ
բան մը կրնան ընել ու ըլլալ :

ՕՐԻՆԱԿ. — Գետը կը հոսի , ծառը կը ծաղկի ,
սառը կը պաղեցնէ կամ կը սառեցնէ , փայտը կը կու-
րի :

կը հոսի բայ է . ի՞նչ կ'ըլլայ գետը , կը հոսի :
կը սառեցնէ բայ է . ի՞նչ կ'ըմէ սառը , կը սա-
ռեցնէ :

կը կուրի բայ է . ի՞նչ կ'ըլլայ փայտը , կը կուրի :





ՀՐԱՀԱՆԳ 9.

Գրեցէ՞ք, ի՞նչ կրնաք ըմել ձեռքով, ոտքով,
դիսով, աչքով, ականջով, քիթով, բերնով, լեզուով,
ականերով, եւայն :

ՀՐԱՀԱՆԳ 10.

Հետեւեալ բայերուն հակառակ նշանակութիւն
ունեցող բայերը գրեցէք .

ՕՐԻՆԱԿ. — Լալ (ծիծաղիլ), վաճառել, մսիլ, սի-
րել, գանել, վեսել, ժողուել, խօսիլ, գովել, եր-
թալ, հրամայել, շնուել, ծածկել, ուրախանալ, իյ-
նալ, տանիլ :


ՔԱՂՈՒՄԱՅԻ

Բաէ՞ք, որո՞նք են ձայնաւոր գրերը:
Ինչո՞ւ ձայնաւոր կ'ըսուին :

ՕՐԻՆԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Զուկ՝ գոյական է, վասն զի կենդանիի անուն է :

Կը լողան՝ բայ է, վասն զի ձուկերուն մէկ
գործողութիւնը ցոյց կուտայ :



Նկարակ եյլ՞ք . գոյականներու ներքեւ մէկ գիծ,
խակ բայերու ներքեւ երկու գիծ քաշեցէ՞ք :

Ա Ծ Ա Կ Ա Ն

Ուսուցիչը ձեռքը կ'առնու երկու յանակ
և երկու տէսրակ ու կը ցուցնէ անոնցմէ մէկը :
Ի՞նչպէս է այս քանակը :

— Երկար :

Ո. — Ինչո՞ւ գործածեցիք հոս երկար բառը :
— Արոշելու համար քանակին տեսակը կամ որպիսութիւնը միւս քանակներէն :

Ո. — Լաւ, շարունակեցէք. Այս:

— Նեղ :

Ո. — Միայն նեղ :

— Ո՛չ, նեղ ու կարճ :

Ո. — Ըսէք, այս տետրակը ի՞նչպէս է :

— Մեծ տետրակ է :

Ո. — Ի՞նչ գոյն ունի:

— Սեւ :

Ո. — Ի՞սխ :

— Փոքր, կարմիր ու լայն տետրակ մ'է :

Ո. — Երկար, լայն, նեղ, կարճ, սեւ, մեծ,
կարմիր, փոքր բառերը ինչո՞ւ գործածեցիք .
յանակին և տէսրակին ի՞նչպէս լցուալը, կամ որպիսութիւնը ցոյց տալու և միւս քանակներէն ու տետրակներէն մեր ուզած որոշելու համար, այնպէս չէ :

Ա Յ Ո :

Ո. — Ուրեմն, դիտցէք որ բանի մը որպիսութիւնը կամ յատկութիւնը ցոյց տուող բառերը ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵՍՆ մէջ կ'ըսուին ԱԾԱԿԱՆ : Կրկնեցէք :

— Բանի մը (զոյականին) որպիսութիւնը կամ յատկութիւնը ցոյց տուող բառերը ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵՍՆ մէջ կ'ըսուին ԱԾԱԿԱՆ :


ՕՐԻՆԱԿ. — Հասուն պառուղ, սեւ թանաք :

Հասուն՝ ածական է, որ գոյականին (պտուղին) քովը բերուելով կը ցուցնէ թէ ի՞նչպէս է պառուղը :

Սեւ՝ ածական է, որ թանաք գոյականին քովը բերուելով, ցոյց կուտայ թէ ի՞նչպէս է, (ի՞նչ գոյն ունի) թանաքը :

ՀՐԱՀԱՆԳ 11.

8/5-2004



Դասարանին մէջ այժիդ առաջ գտնուած իրերուն անունները զրէ. եւ յետոյ հարցուր Այսպէս :

Գրատախտակ. (ի՞նչպիսի) Աեհ գրատախտակ .


Գրասեղան (») Հին գրասեղան .

Գիրք (») Նոր գիրք .

ՀՐԱՀԱՆԳ 12.



Թանաքաման



Ժամացոյց



Մեխակ

Վերոպրեալ պատկերներուն հետեւեալ ածական-
երը գործածեցէք :

ԱԾԱԿՈՒՆ

Նոր, հին, սուր, փայլուն, կարծր, մեծ, ծանր,
պղտիկ, սեւ, կապոյց, կարմիր:

ՆՍԽԱ.ԴԱ.ՍՈՒԹԻՒՆԵՆԵՐ

Առանց ածականի

Յովհաննէս բերաւ հաւ-
կիթներ :

Զին կենդանի մ'է :

Հայրը տղուն ձեռքէն
բռներ էր :

Տղաքս, գոյականի մը շատ մը ածական կրնաց
տրուիլ :

Ածականով

Յովհաննէս բերաւ բարմ
հաւկիթներ :

Զին օցակար կենդանի
մ'է :

Հայրը փոյքիկ տղուն
ձեռքէն բռներ էր :

Տղաքս, գոյականի մը շատ մը ածական կրնաց



ՀՐԱՀԱՆԳ 13.

Մարդու մը կրնայ ըսուիլ :

Մեր-երիսասարդ, մեծ-փոյք, զունաս-կարմիր,
կար-ուժեղ, դանդաղ-ձարպիկ, կոյր, խուր, կադ:

Առողջ-հիւանդ յխուր-ուրսիս, հարուս, մեծա-
տուն-աղբաս, անշիր, ուշիմ-ապուշ, բաղդաւոր-ան-
քաղի, մայուր-աղտոս, բարի-չար, պարկեշ-ան-
պատկան, ազեխ-անազնիւ :



ՀՐԱՀԱՆԳ 15.

Վերոպրեալ ածականները գործածեցէք աղայ
մը նկարագրելու :

ՀՐԱՀԱՆԳ 15.



Եկարագրեցէ՞ի, ի՞նչպիսի շողենաւ է :
Մի՛ մոռնաք ամէն գոյականի պատշաճ ածական-
ներ տալ :

Տղաքս , Ածականները ինքնին ախակ չեն
գործածուիր , չըսուիր . և ես տեսայ սեւ, կար-
միր, մեծ, շայն , պէտք է գոյական բառ մը :

Ածական կը նշանակէ թերուած . որովհե-
տեւ կը բերմնը ու կ'աւելցնենք գոյականին վրայ,
որոշելու համար զայն՝ նոյն տեսակ ուրիշ իրե-
րէն, անձերէն կամ կենդանիներէն :

ԹԻՒԵՐ կամ ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ


Ո. — Տղաքս , երբ ըսեմ հինգ գրիչ ու-
նիմ, յորս մատիտ ունիմ, ի՞նչ ցոյց տուած կ'ըր-
լան հինգ , յորս բառերը :

— Գրիչն , մատիտին բանի՛ հաս ըլլալը :

Ո. — Գոյականներու բանի՛ հաս ըլլալը ցոյց
տուող բոլոր բառերը , թիւերի , ածական են :

Ո. — Բաէք , բանի մը բանի՛ հաս ըլլալը
ցոյց տուող բառերը ի՞նչ են :

— Ածական են :



Բաէք , բանի՛ աղջիկ : բանի՛ աղայ կը տեսնէք :



Գրեցէք ի՞նչ գոյն ծաղկներ կը ճանչնաք :

Ո. — Ցղաք'ս, գիտցէք որ բոլոր գոյնի ու
թիւի անունները աժական են :

ՀՐԱՀԱՆԳ 16.

Նախաղասութիւններ կաղմեցէք գոյնի եւ թիւի
անուններ գործածելով :

ՀՐԱՀԱՆԳ 17.

Հսէք կամ գրեցէք :
Շաբարը յանի՞ օր է .
Տարին յանի՞ ամիս է .
Ամիսը յանի՞ օր ունի .
Քանի՞ տոյս կայ դպրոցին մեջ .
Քանի՞ դաստու կայ .
Քանի՞ հոգիկ կը բաղկանայ ձեր դաստանը .
Ձեր տունը յանի՞ հոգի կայ .
Քանի՞ եղբայր, յանի՞ ոյց ունիս .



Նկարագրեցիք, շատ աժականներ գործածելով :

ԳՅԱՂԱՌԵՔ

Միավանկ, երկվանկ բառերը զատ զատ սիւնակ-
ներու մէջ գրեցէք :

Բազմավանկ (երկու վանկի աւելի ունեցող) բա-
ռերը վանկերու բամբեցէք եւ ձայնաւոր գրերուներ-
քեւ գիծ քաշեցէք :

Ըսէք, ինչո՞ւ ձայնաւոր, ինչո՞ւ բաղաձայն կ'ըս-
ուին :

ՕՐԻՆԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Պետրու՝ գոյական է, վասն զի անձի անուն է .
Նոր՝ աժական է եւ կը ցուցնէ գիրքին որպիսու-
թիւնը :

Գիրք՝ գոյական է, վասն զի իրի անուն է :

Պատուեց՝ բայ է եւ ցոյց կուտայ Պետրոսի գոր-
ծողութիւնը :

ՄԱԿԲԱՅ

Ուսուցիչը . — Դրեցէք , ձիերը ԱՐԱԴ վազեցին :

(Կը գրեն) , Զիւրը Ա.Ի.Գ. վազեցին :

Ո. — Ի՞նչպէս կամ ի՞նչ կերպ վազեցին :

— Անոնք Ա.Ի.Գ. վազեցին :

Ո. — Գրեցէք , Սահակ ՀԻՄՈ եկաւ :

— (Կը գրեն , Սահակ ՀԻՄՈ եկաւ :

Ո. — Ե՞րբ եկաւ Սահակ :

— ՀԻՄՈ եկաւ :

Ո. — Գրեցէք , պղտիկ տղայները ՀՊՍ կը նսին :

(Կը գրեն) , պղտիկ տղայները ՀՊՍ կը նսին :

Ո. — Ո՞ւր կը նսին պղտիկ տղայները :

— ՀՊՍ կը նսին :

Ո. — Ուշադրութիւն ըրբ.՝ արագ , հիմա , հոյս բառերը գիտէք , ի՞նչ ցոյց տուին :

Արագ , ցոյց տուաւ ԿԵՐՊ , թէ ի՞նչպէս վազեցին ձիերը :

Հիմա , ցոյց տուաւ ԺԱՄԱՆԱԿ , թէ ե՞րբ եկաւ Սահակ :

Հոյս , ցոյց տուաւ ՏԵՂ , թէ ո՞ւր տեղ կը նըստին տղայները :

Ի՞նչպէս (կերպ) , երբ (ժամանակ) , ուր (տեղ)

ցոյց տուող բառերը ՔԵՐԱԿՈ.ՆՈՒԹԵԱՆ մէջ կը կոչուին Մակրայ , որովհետեւ այս տեսակ բառերը լնդիհանրապէս կ'աւելնան բայի վրայ :

Ո. Ըսէք , ի՞նչ է Մակրայ :

— Կերպ , ժամանակ , տեղ ցոյց տուող բառերը ՄԱԿԲԱՅ կ'ըսուին :

Ո. — ՄԱԿԲԱՅ կը նշանակէ բայի վրայ դրուող :

ՕՐԻՆԱԿ . — 1. Մեխակը անուշ կը բուրէ :

Մարդար աղեկ կը կարդայ :

Ի՞նչպէս կը բուրէ մեխակը . — Անուշ : Անուշ մակրայ է :

Ի՞նչպէս կը կարդայ Մարդար . — Աղեկ : Աղեկ մակրայ է :

2. Նա անմիջապէս կուգայ :

Բարսեղ վաղը Կ'ԵՐԹԱՅ :

Ե՞րբ կուգայ նա . — Անմիջապէս : Անմիջապէս մակրայ է :

Ե՞րբ Կ'ԵՐԹԱՅ Բարսեղ : — Վաղը : Վաղը մակրայ է :

3. Մենք հոն պիտի երթանք :

Դաւիթ հոն է :

Ո՞ւր պիտի երթանք : — Հոն : Հոն մակրայ է .

Ո՞ւր է Դաւիթ : — Հոն : Հոն մակրայ է :

Ո. — Ըսէք , անուշ , աղեկ , անմիջապէս , վաղը , հոն , հոյս , մակրայները բային ի՞նչը ցոյց տուին :

— Տեղը , ժամանակը , կերպը ցոյց տուին :

ՀՐԱՀԱՆԳ 18

Հետեւեալ նախադասովթիւններուն մէկ մէկ մակայ աւելցուցէք .

ի՞նչպէս	կը սովորի : — ժամանակը
ի՞նչպէս	
կ'անցնի :	— Սարգիս կուզայ : —
ի՞նչպէս	կը փախչի գէորդ կանչէ . —
ի՞նչպէս	կը խօսի : — Զեր հրահանգներ ե՞ր
պմցիք :	— պիտի երթանք Պօլիս : — Թող
ե՞ր	
սուր,	երթամ : — Եթէ երթամ, կը
ի՞րադառնամ	կը : — Պիտի գաս : — Բոէ այո՛
կամ ո՞չ :	



ի՞նչպէս կը քարեշոշունը : —


ՀՐԱՀԱՆԳ 19.



... Դում ճակատական երկու կողմուն մասնակիութեան մասին պատուակները և նույն մասնակիութեան մասին պատուակները կազմութեան մասնակիութեան մասին պատուակները և նույն մասնակիութեան մասին պատուակները ...




Ամպերը ի՞նչ չպես կը փախչին : —



Ե՞րբ կը խօսին աքլորները :

ՄԱԿԱՍՅՆԵՐ

Հեռու, մօս, ներս, դուրս, կանուխ, ուշ, միջ,
երթեմն, աղեկ, զիշ, ձրի, կամաւ, շուտ, ընտանե-
քար, հայերեն, որդան, փիչ :



ՀԲԱՀԱՆԴ 21.

Վերոզրեալ մակրայներով նախադասութիւններ
կազմեցէք :

ՔԱՂՋԱԿԱՆԻՑ

Կենդանիի միավանկ անուններ գրեցէ՛ք :
Երերու երկվանկ անուններ գրեցէ՛ք :
Ածականներ գրեցէ՛ք բազմավանկ (երկու վանկ աւելի ունեցող) :

ՕՐԻՆԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Ճունը՝ գոյական է, վասն զի կենդանիի անուն է :
Արագ՝ մակրայ է, որ աւելնաշով բային վրայ,
կը ցուցնէ թէ ի՞նչպէս կը փախչի :

Կը փախչի՝ բայ է եւ կը ցուցնէ թէ ի՞նչ գործողութեան մէջ է շունը (գոյականը) :



ԴԵՐԱՆՈՒՆ

Ուսուցիչը. — Աշակերտնե՛րս, երբ ձեզ հետ խօսիմ, անունիս տեղ կարճ բառ մը կը դնեմ և կըսեմ. Ես տեսայ, ես պատուիրեցի, ես խօսեցայ :

Հաէ՛, ներսէս, երբ խօսողը դու ըլլաս, քու անունիդ տեղ ի՞նչ բառ կը դործածե՞ս :

— Ես :

Ո. — Այէն մէկերնիդ ալ միենոյն բառը չէ՛ք դործածեր ձեր անունին տեղ, երբ խօսիք :

— Այո՛ :

Ո. — Որու հետ որ խօսիմ, դիմացին կ'ըսեմ. Դու :

Դու ինչո՞ւ դասող չես պատրաստեր. Դու յանցաւոր ես, դու պիտի պատժուիս :

Հսէ՛ք, դու որո՞ւ անունին տեղ դրած կ'ըլլամ:

— Որու հետ որ կը խօսիս, անոր (դիմացինիդ) անունին տեղ դրած կ'ըլլաս :

Ո. — Երբ մէկու մը հետ խօսիմ, բացակայ եղող անձի մը անունին տեղ ալ բառ մը կը դործածեմ, ան կամ նա :

Հսէ՛ք, երբ իրարու հետ խօսիք, ուրիշի մը կամ բացակայ եղող անձի մը անունին տեղ ի՞նչ բառ կը դնէք :

— Ան կամ նա :

Ո. — Բաէք, ես, դու, ան կամ նա բառերը ինչի՞ տեղ կը դրուին :

— Անուններու տեղ :

Ո. — Տղաքս, ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ մէջ անուններու տեղ դրուող բառերը ԴԵՐԱՆՈՒՆ կըսուին :



ՕՐԻՆԱԿ. — Գրիգոր երբ տուն գար, ան կ'ուզէր անմիջապէս վեր ելնել իր դասերը պատրաստելու։ Ան դերանուն է՝ գործածուած Գրիգոր անունին տեղ։

Իր՝ դերանունին է՝ գործածուած Գրիգորին տեղ։

Դերանուն կը հշանակէ անունի տեղ դըրուած։

Դերանունները կը գործածուին անուններու տեղ եւ շատ անգամ նախադասութեան մէջ յիշուած բառ մը չ'կրկնելու համար։


ՕՐԻՆԱԿ.

ԴԱՍԱԴԱՍԱԽԹԻԿԻՆ ՄԸ

ԱՌԱՆՑ ԴԵՐԱՆՈՒՆԻ

Երբ Զապէլ վերացառնայ Սկիւտարէ, Զապէլ պիտի ուզէ ուզ-ղակի երթալ Զապէլին տունը եւ նախ Զապէլին մայրը պիտի մայրը պիտի տեսնէ։

Ո. — Բաէք, ի՞նչ դերանուններ գործածեցիք Զապէլ զոյականին տեղ։



ԴԵՐԱՆՈՒՆԻ

Երբ Զապէլ վերացառնայ Սկիւտարէ, ան պիտի ուզէ ուզ-ղակի երթալ իր տունը եւ նախ իր մայրը պիտի տեսնէ։

ՀՐԱՀԱՆԳ 22.

Դոյականներու տեղ գերանուններ գործածեցէք և
հետեւեալ նախազասութեանց մէջ .

Վարժուհին դաս կուտայ հիմա եւ վաղը վարժու-
հին պիտի պահանջէ:

Երե սղաֆները բարի ըլլան , սղաֆները կը սիր-
ուին :

Երե աշակերտները անհնազանդ ըլլան , աշակերտ-
ները կը պատճուին :

Մեսուն լաւ մօրը . Մա'յր , կը սիրե՞ս Մես-
ունը (իրեն համար) :

Երբ Երուանդ դպրոցեն արակուի , Երուանդ
պարտեզ պիտի երբայ :



ՀՐԱՀԱՆԳ 23.


Հետեւեալ հարցումներուն պատասխանեցէք՝ մէկ
մէկ գերանուն գործածելով .

Ո՞ւր են դպրոցականները . — . . . Դպրոցին մէջ են :
Ո՞ւր է Կարապետ . — . . . Պոլիս զնաց :

Յակոբ ըստաւ . Սարգիս , պիտի դրկե՞ս ինձ
գիրք մը :

(Սարգիս իրեն համար) կը դրկեմ ֆեզ
գիրք մը :

Ո՞վ իր դասը լաւ պատրաստած է , ըսէ՞ք Որո՞ւ
հարցնեմ — :



Նախադասութիւններ կազմոցէք դերևանունով .

ՀՐԱՀԱՆԳ 24.



Դերանունները որոշեցէ՞ք :

Ես կ'երթամ պարտէզ, դու ալ միասին եկուր,
թող ան մինակ տունը մնայ, մինք երկուքնիս սիրով
կը խաղանք, ըստ Պետրոսը Պօղոսին :

Պետրոս եւ Պօղոս պարտէզ գացին խաղալու :

Խաղի սկսելու ատեն, Պետրոս ըստ Պօղոսին .
Ես առաջ պիտի նետեմ գնդակը : Պօղոս ալ կ'ըսէր .
Ես առաջ պիտի նետեմ, դու վերջը :

Վէճը սկսաւ եւ կոռոփ փոխուեցաւ . ծեր մարդ մը
տեսաւ անմնց կոփւը եւ ըստ . — Դուք չէ՞ք ամբշ-
նար, ալ պղտիկ տղաքներ չէք :

Անոնք ամչցան եւ սկսան իրարու երես նայիլ,
մտածելով որ սիրով եկած էին պարտէզ՝ խաղալու եւ
ոչ թէ կոռուելու :


Ո. — Ըսէ՞ք, ես, դու, ան, մենի, դուի,
անոնի դերանունները ո՞ր բառերուն տեղ դը-
ռած են :



ՀՐԱՀԱՆԳ 25.

Պատկերներուն վրայ նայելով նախադասութիւն-
ներ կազմեցէք առանց դերանունի :





ՀՅԱՀԱՆԳ 26.

Դոյյականներու տեղ դերանուններ գործածեցէ՛ք :

Թ Ա. Կ Ո Ւ Ս. Ծ Վ

Նախադասութիւն որո՞ւ կ'ըսուի :

Առանց բայի նախադասութիւն կ'ըլլա՞յ :
Երկու բառով նախադասութիւն մը ըսէ՛ :

ՕՐԻՆԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Ես՝ Դերանուն է, զրուած անունիս տեղ:
Մակրայ է, որ աւելնալով բային վրայ, կը ցուցնէ թէ ի՞նչպէս (կը կատարուի գործողութիւնը) կ'երթամ :

Կերպամ՝ Բայ է, եւ կը ցուցնէ թէ ի՞նչ գործի կամ գործողութեան մէջ եմ :

Դպրոց՝ Դոյյական է, վասն զի տեղի անուն է :

ՇԱԴԿԱՊ

Ուսուցիչը. — Դրեցէ՛ք. ձանձներն ՈՒ մը ժեղները չեմ սիրեր :

— (կը գըեն) ձանձներն ՈՒ մժեղները չեմ սիրեր :

Ո. — Բաէ՞ք, ո՞ր բառը կապեց երկու գոյականները :

— ՈՒ բառը կապեց :

Ո. — Կարապետ այսօր ԿԱՄ վաղը Կ'երթայ : Բաէ՞ք, ո՞ր բառը կապեց երկու մակրայները :

— ԿԱՄ բառը :

Ո. — Բաէ՞ք, վերսպըբեալ նախադասութիւններու մէջ գտնուած կապող բառերը որո՞նք եղան :

— ՈՒ, ԿԱՄ բառերը :

Ո. — Տղաքս, ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ մէջ կապող բառերը կ'ըսուին ՇԱԴԿԱՊ :

Ո. — Ո՞ր բառերը կ'ըսուին շաղկապ :

— Կապող բառերը կ'ըսուին շաղկապ :

Ո. — Շաղկապները ոչ միայն բառերը իրաբու կը կապեն, հապա նախադասութիւններն ալ :

Ա. Յոպէս.

Յակոր տուն գնաց եհ սեղանը պատրաս-
տեց :

Ո. — Ի՞՞ր բառը շաղկապ է և ինչու հա-
մար :

Եհ շաղկապ է, վասն զի երկու նախադա-
ստրիւններ իրարու հետ կապեց :

Ո. — Ուրեմն շաղկապը բառ մ'է, որ կը
միացնէ երկու բառեր կամ նախադաստրիւն-
ներ :

ՕՐԻՆԱԿ. — Երեկ դպրոց չ'գացի, ՈՐՈՎՃԵՏԵՒ
կարկու եհ անձեւ եկաւ :

Որովճետեւ Շաղկապ է, վասն զի « Երեկ դպրոց
չ'գացի » նախադաստրիւնը ՄԻԱՅՈՒՑ կարկու եհ
անձիւ եկաւ նախադաստրեան :


Եւ շաղկապ է, վասն զի կարկու բառը ՄԻԱՅՈՒՑ
անձեւ բառին :

ՇԱՂԿԱՊ կը նշանակէ կապոդ :



ՀԲԱՀԱՆԳ. 27.

Տոյց տուէք շաղկապները :
Դաստ մտադիր կարգայ որ լաւ հասկնառ : Ոգելից



Շոգեկառք

Ըմպելիներ չեմ խմեր, վասն զի մասսակար են :

Յակոր եւ Յովհաննէս զացին: Ոսկի ու արծաթ
չունիմ: Սաթինիկ կ'երգէ, բայց չ'պարեր: Մարկոս
սանդուղէն վար ու վեր կը վագէր: Խնձոր մը կամ
տանձ մը տուր: Շոգեկառքո՞վ թէ՛ շոգենաւով եկաք:
Ամենքը կ'աշխատին, իսկ ես նստեր կը մտածեմ:

ՇԱՂԿԱՊՆԵՐ

Եւ, ու, կամ, որ, թէ, եթէ, վասն զի, բանզի,
որովճետեւ, ուսի, իսկ, երբ, երբոր, մինչդեռ, նաև,
թէեւ, թէպէս, ուրեմն, բայց, որպէս զի, ինչու որ,
այլ, ոչ թէ, մանաւանդ, սակայն, այնպէս:

ՀՐԱՀԱՆԳ 28.

Կէտերուն տեղ յարմար շաղկապներ դրէք:

Տանձ ինձոր շատ կը սիրեմ: Տուէք ինձ
տանձ մը ինձոր մը : Պէտք է դասս պատ-
րաստեմ հիմա կուգայ դասատուս: Դասս դիւրին
չէ ջանք չընեմ: Ես չեմ կրնար երթալ հի-
ւանդ եմ: Մարգար կ'ուզէ գալ ձեզի շատ կը սի-
րէ ձեզ: Դաւիթ երիտասարդ է հայրը ծեր: Դրկէ
անոր գրիչ մը մատիտ մը :


Ի՞նչ կը տեսնէք. — Կը տեսնեմ




Շունը



Կատուն



Կաղինները



Տանձը




ՀՐԱՀԱՆԳ 29.

Պատկերներուն վրայ նայելով նախադասուրիւններ
կազմեցէ՛ք շաղկապներ գործածելով :



Նկարագրեցք :



Կապեցէ՛ք երկու գոյականներ ԵՒ , ՈՒ շաղկա-
պով : Նախաղասութիւններ կազմեցէ՛ք, ԿԱՊԵԼՈՎ եր-
կու ածական իրարժու հետ . երկու բայ , դերանու մը
եւ գոյական մը , եւայլն :

ՔԱՂՈՒԱԾԻՑ

Նախաղասութեան մը մասերը Ի՞՞նչ կ'ըսուին :
Վանկ որո՞ւ կ'ըսեն :
Հեշում ներու նշանները Ի՞՞նչ կ'ըսուին :

ՕՐԻՆԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Փոքրիկ՝ Ածական է եւ կը ցուցնէ եղբօրը որ-
պիսութիւնը:

Եղբայրը՝ Գոյական է , վասն զի անձի անուն է:
Եւ՝

Եղբայրը՝ Շաղկապ է , վասն զի եղբայրը , քոյրը,
երկու բառեր (գոյականները) միա-
ցուց :

Քոյրը՝ Գոյական է , վասն զի անձի անուն է:
Մակրայ է , որ աւելնալով բային վը-
րայ կը ցուցնէ թէ ե՞րբ գացին :

Գացին՝ Բայ է , եւ կը ցուցնէ թէ Ի՞՞նչ գոր-
ծողութեան մէջ են երկու անձերն
(եղբայր եւ քոյր) :

Գոյական՝ Վասն զի տեղի անուն է :

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ուսուցիչը: — Տեսէ՛ք, գրասեղանը հոս է, արռող հոն, հիմա կրնանք գրասեղանը և արոնը իրարու հետ զանազան յարաբերութեան մէջ դնել :

Կ'առնենք արռող և կը դնենք գրասեղանին վրաՅ :

Ի՞նչ յարաբերութեան մէջ դրած կ'ըլլանք այն տաեն արռող ու գրասեղանը, ըսէ՛ք, ո՞ւր է արռող և ո՞ւր է գրասեղանը :

Աթոռը և գրասեղանը իրարու հետ սա յարաբերութեան մէջ դրած կ'ըլլանք . արռող գրասեղանին վրաՅ, գրասեղանը արռոին ներդնի (ՏԱԿ) :

Ո. — Հիմա կ'առնեմ աթոռը և սա ձե կը դնեմ գրասեղանին Ա.Ա.Ա.Զ, ի՞նչ յարաբերութեան մէջ դրած կ'ըլլամ արռող և գրասեղանը իրարու հետ :

— Արռող գրասեղանին Ա.Ա.Ա.Զ և գրասեղանը արռոին եցել :

Ո. — Ըսէ՛ք, ուրիշ ի՞նչ յարաբերութեան մէջ կրնաք դնել արռող և սեղանը իրարու հետ :

— Կրնանք արռող դնել սեղանին ՄՕՏ, սեղանին ՔՈՎ, սեղանին եցել :

Ո. — Յարաբերութիւն ցոյց տու ող բառերը որո՞նք եղան, բոէ՛ք :

— ՄօՏ, ֆով, ետեւ, առաջ :

Ո. — Գիացէք որ յարաբերութիւն ցոյց տուող որիէ բառ ֆերականորեան մէջ կ'ըսուի ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ : Ըսէ՛ք, ո՞ր բառը Նախադրութիւն կ'ըսուի :

— Նախադրութիւն կ'ըսուի այն բառը, որ կը դրուի գոյականէն եսքը, անոր ուրիշ գոյականի մը կամ բառի մը մէջ եղած յարաբերութիւնը ցոյց տալու համար :


Ո. — Նախադրութիւն կը նշանակէ առաջ դրուող, բայց ուրիշ հայերէնի մէջ շատ անդամ եսքը դրուելուն համար կ'ըսուի նաև ՑԵՍԱԴՐՈՒԹԻՒՆ, որ կը նշանակէ եսքը ԴՐՈՒՅԴ :

ՕՐԻՆԱԿ. — Կը տեսնեմ իմ զմելիս սեղանին վրաՅ :

Քեզ ՄՕՏ ևս կեցած եմ :

ՎՐԱՅ նախադրութիւն է, որ դրուած է սեղան գոյականէն եսք եւ ցոյց կուտայ զմելիս եւ սեղանին մէջի յարաբերութիւնը :

ՄՕՏ նախադրութիւն է, ան զրուած է ֆեղ գերանունէն ետքը, ցոյց տալու համար ես, ֆեղ երկու գերանուններու հետ ունեցած յարաբերութիւնը :



ՀՐԱՀԱՆԳ. 31.

Նախադրութիւն . — Պատասխանեցէք նախադրութիւններով :

Մէջ . — Ի՞նչի մէջ կը գտնուի ձուկը . — Կրակը . — Դրամը .

Մտածեցէք զտնել այնպիսի գոյականներ որ ջուրի, սևնեկի, պարտէզի մէջ ըլլան:

ԱՌԱՋ. — Եկեղեցոյ, գլորոցին, զասատուին, աշակերտներուն առաջ ի՞նչ կը գտնուին:

ԵՏԵՒ . — Ի՞նչ կը գտնուի մեր գլորոցին ետեւ, արշրին ետեւ, ո՞վ կեցած է եպիսկոպոսին ետեւ :

ՄՕՏ . — Ի՞նչ կը գտնուի սեղանին մօտ, վառարանին մօտ :

ՎՐԱՅ. — Ի՞նչի վրայ նստած են աշակերտները, զասատուն . ինչի՝ վրայ կը գտնուի զվարկդ :

ՃՈՒՐՋ. — Ի՞նչ կայ իմ շուրջը, քու կամ անոր շուրջը, պարտէզին բոլորսիին, տակոնին շուրջը, դոյլին շուրջը :

ՀՐԱՀԱՆԳ. 32.

ՈՐՈՇԵՑՔ նախադրութիւնները :

Սղջիկներ կան պարտէզին մէջ : — Թոչունները կը թուշտին ծառին վրայ : — Յովհաննէս զարձաւ պարտէզին բոլորտիքը : — Տեսայ թոչունը վանդակին մէջ : — Մենք տեսանք ձուկերը որոնք կը լողային ջարին մէջ : — Վերմակին ներքեւ կը պառկիմ : — Ծառին տակը կը նստիմ : — Գրասեղանին մօտ կեցայ : — Դպրոցին մէջ շատ տղաքներ կան :

ՀՐԱՀԱՆԳ. 33.

ԿԷՄԵՐՈՒՆ տեղ նախադրութիւն մէլ զիր :

Գրքեր կան զրասեղանին : — ԱՌԱՋ տեսար Պետրոսը : — Պարտէզին : — Սահակ չը խօսիր իր ընկերներուն : — Յովհաննէս կը վագէ դաշտին : — Մենք կրնանք լողալ ծովին

կամ գետին : — Եկեղեցին շինուած է բլուրի
մը : — Պարտէզին պառյտ մը ըրինք : —
Կատուն կը խաղայ մուկին : — Յակոբ մերժեց
երթալ ինձ Եկեղեցի :

ՀՐԱՀԱՆԳ 34.

Նախադասութիւններ կաղմացէք նախադրութիւն-
ներով :




Ի՞նչ յարաբերութեան մէջ կը գտնուի աղջիկը
աթոռին, շունը մարգուն հետ :



Ի՞նչ յարաբերութեան մէջ կը գտնուին իրազու հետ



Ի՞նչ յարաբերութեան մէջ են տղան եւ շունը :



Ք. Ա. ՈՒ Ս. Ծ. Ք.

Բայր գոյականին ի՞նչը կը ցուցնէ :
Ածականը գոյականին ի՞նչը կը ցուցնէ .
Մակրայը զործողութեան (բային) ի՞նչը կը ցուցնէ :
Եադկապը ի՞նչ կ'ընէ :

ՕՐԻՆԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Յովհաննես՝ գոյական է, վասն զի անձի անուն է :
Արագ՝ մակրայ է, որ աւելնաշով բային
վրայ, կը ցուցնէ թէ ի՞նչպէս կը
վազէ :
Կը վազէ՝ բայ է, եւ կը ցուցնէ թէ՝ ի՞նչ զոր-
ծողութեան մէջ է գոյականը :
Դաշտին՝ գոյական է, վասն զի տեղի անուն է :
Մէջ՝ նախադրութիւն է, վասն զի դրուած
է դաշտ գոյականին ետք եւ ցոյց
կուտայ Յովհաննէսին եւ դաշտին
յարաբերութիւը :

ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Ուստցիչ . — Առանց մարդու մը խնդալը
տեսնելու, անոր հա՛, հա՛, հա՛, ձայնը երբ առ-
նէք, ի՞նչ կ'ըսէք:

— Մարդը ուրախ է և կը խնդայ :

Ո. — Երբ լսէ՛ք սա ձայնը. վա՛խ, թռչնիկս
փախաւ, ի՞նչ կ'ըսէք :

— Թռչունը փախելուն համար կը ցախի :

Ո. — Ըսել է մեր լսած անիմաս բառերը
կամ ձայներն ալ կը յայտնեն մէկու մը ուրա-
խութիւնը, տրսմութիւնը, ինչպէս նաև փափա-
զը, բարկութիւնը, վախը, զզուանիք, մէկ բա-
ռով՝ զգացումը :

Ո. — ԶԳԱՑՈՒՄ ՅԱՅՏՆՈՂ բառերը ՔԵ-
ՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ մէջ կ'ըսուին Զայնարկութիւն :

Ո. — Ի՞նչ կը նշանակէ ձայնարկութիւն :

— Զայնարկութիւն կը նշանակէ ձայն ձր-
զել . երբ մէկը յանկարծ կ'զգացուի՝ ակամայ
ձայն մը կը ձգէ :

ՕՐԻՆԱԿ. — Վա՛յ, ե՛յ, ա՛հ :

Վա՛յ՝ ձայնարկութիւն է, տրսմութեան զզացում
ցուցնող :

Ե՛հ՝ ձայնարկութիւն է, զզուանաց զզացում ցու-
ցնող :

Ա՛հ՝ ձայնարկութիւն է, ուրախութեան զզա-
ցում ցուցնող :

ՉՈՅՆԱՐԿԱՌԻԹԻՒՆԵՐ

Ո՞հ , ա՞հ , կ՞ ,
Ո՞հ , ե՞հ , օ՞ ,
Վայ , վա՞հ , վա՞ի .
Ո՞ , Ո՞հ , աւա՞ղ , ափսո՞ս
Երանի՞ թէ , ո՞ւր է թէ
Ա՞յ , օ՞յ ,

Կը յայտնեն ուրախու-
թիւն : Զգուանի :
(Կը յայտնեն ափոփանի
(Եւ տրմուրիւն :
փափագ
բարկուրիւն :



Լոէ՞ք , այս վիճակի մէջ եղող տղան ի՞նչ ձայն կը հանէ

ՀՐԱՀԱՆԳ 35.

Զայնարկուրիւնները որոշէ :

Ա՞հ , իմ սիրելիս , ե՞րբ եկար : — Վա՞հ , շուտ փա-
խու : — Ա. փսո՞ս , չը լրցայ տեսնել : — Երանի թէ
անզամ մը տեսնէի : — Այ , անպիտան : — Ո՞ , մասս
կարեցի : — Ո՞հ , ե՞րբ պիտի տեսնեմ մայրու : — Օ՞սա ,
կեղծաւոր տղաքներն :



Ո. — Գիտեք որ կենդանիներու և իրերու ձայներն աղ ձայնարկութիւն են. ըսէք, ի՞նչ ձայն կը հանէ հաւը :

— Կըթ, կըթ :

Ո. — Կատուն ի՞նչ ձայն կը հանէ :

— Միաւ :

Ո. — Թանգար :

— Չընկ, զընկ :

Ո. — Բաէք, ի՞նչ կըսուին ՔԵՐԱԿՍՆՈՒԹԵՍՆ մէջ այս ձայները. կըթ, կըթ, միաւ, զընկ, զընկ :

— Ձայնարկութիւն :

ՀՐԱՀԱՆԳ 63.

Նախադասութիւններ կազմեցէք, ձայնարկութիւնները ըլլան կենդանիներու եւ իրերու ձայններ :

ՀՐԱՀԱՆԳ 37.

Պատկերներու վրայ նայելով նախադասութիւններ կազմեցէք. գրեցէք թէ այն վիճակի մէջ եղողները ի՞նչ ձայն կը հանեն: (Տես երես 55, 57):

ՔԱՎԱՐԱԿԻՑ


Նախադասութիւն մը վանկերու բաժնեցէք :

ի՞նչ կանոնով բաժնեցիք վանկերը :

ի՞նչ է Դերանունը :

ի՞նչ է զոյականը :

ի՞նչ է նախադրութիւնը :



ՕՐԻՆԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵՍՆ

Ա՞հ՝ ձայնարկութիւն է, ուրախութեան ըզգացում ցուցնող :
Ե՞րբ՝ մակրայ է, որ աւելիաշոյ բային վըրայ, կը հարցնէ ե՞րբ գալը :

Եկար՝ բայ է եւ կը ցուցնէ գոյականին զոր-
ծողութիւնը .

Միշուն՝ տօմական է , եւ կը ցուցնէ գոյակա-
նին ի՞նչպէս լլլալը :

Ծիծեռնակ՝ զոյական է , վասն զի կենդանիի ա-
նուն է :

ՀՐԱՀԱՆԳ 38.

Հետեւեալ նոյնանիշ բառերը որոշեցէք թէ ի՞նչ
մասն քանի են :

Նոյնանիշ բառեր :

Գեղջուկ—գիւղացի . կոյժ—սափոր . կայք—գոյք .
Լուսամուտ—պատուհան . տարածել—սփուկ . պոռալ—
գոչել—աղաղակել . պարարտ—գէր . ստակ—զրամ .
Կինձ—վարազ . հաւաքել—ժողվել—զիգել—կուտակել .
Քանդել—աւրել խորտակել—կործանել . մերթ—եր-
բեմն . սոսկալի—սարսափելի—զարհուրելի . դուստր—
աղջիկ . ուստր—տղայ . անուշ—քաղցր . արեւ—արեգ—
արեգակ . արփի . ալեւոր—ծեր . հանզիպիլ—պատահիլ .
Դարձեալ—վերստին—կրկին . մշակել—հերկել . բոյս—
տունկ . սատ ձիւդ . ձերմակ . սպիտակ . հաւատարիմ—
մտերիմ . չուել—զաղժել . պարգևել—ընծայ—նուէր .
Բերկրանք—ցնծութիւն—ուրախութիւն—խնդութիւն .
ախուր—տրատում . լուր . համբաւ . շինել—կառուցա-
նել . աշխատասէր—ջանասէր—ժրաշան . զրոյց—խօսակ-
ցութիւն . ստացափիր—ընկալագիր :

Ուսուցիչը . — Յղաբներս , այս գասերով
սովորեցար թէ նախագասութիւնները ուժ տե-
սակ բառերէ կը կազմուին , որոնք Քերականու-
թեան մէջ կը կոչուին ՈՒԹ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ կամ
ԽՕՍՔԻՆ ՄՈԼՈՒՄ լ .

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱԸ

Կ . ՊՈԼԻՄ , ՄԷՐՃՈՆ , ՓՈՂԱՅ



ԴԱՍԱԿԱՆ ԳՐԵԱՆՔ

ՄՄՆԿԱՆՑ ԳԻՐՔԸ կամ ՀԱՐՊԻԿ ՔԵՐԱԿԱՆ
Կերազարդ , բոլորովին նոր ոճով , ապագրեալ լո-
թիւ անգամ : Հատը 5 փարայ :

ՄՄՈՐԳԱՐԻՏՆԵՐ , Մանկապարտէզի-ծաղկոցի մա-
նուկներուն համար , կ'ուսուցանէ 12 օրինակելի բա-
ռերով կարգալ , զրել , եւ կը բովանդակէ երդեր , խա-
զեր , առակներ եւ հանելուկներ : Գին 40 փարայ :

ՍԻՐՈՒՆ , ԶԲՈՍԱՐՈՒՆ , Մանկանց երկրորդ գիրքը,
կը պարունակէ մանկական երգեր , կարճ հաստուածներ ,
առակներ , բարոյալից փոքրիկ պատմութիւններ եւ ա-
ռածներ : Եւ ապագրութիւն . Գին 2 զրշ :

ՈՍԿԵՄԱՏԵՆԻԿ Հայ տղայոց . երրորդ գիրք ըն-
թերցանութեան . Դ . ապագրութիւն 120 պատկերնե-
րով . կը բովանդակէ բարոյական գեղեցիկ պատմու-
թիւններ , ստանաւորներ , երգեր , առակներ , կրօ-
նական ու գիտական ամենակարեւոր գիտելիքներ ,
եւ այլն : Գիրք մը՝ արժանի իւր անուան եւ պիտա-
սի ամեն հայ տղայոց : Գին 4 զրշ :

ՄՄՆԿԱՆՈՐԺՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ պատկե-
րազարդ . մասն Ա . կուսուցանէ պատկերներու վրայ
հայ լեզուի քերականութեանը նախագիտելիքը : Եր-
տեսակին մէջ աննման , արժանի է հայ ուսուցիչներու

Եւ գնահատման : Գին լաթակազմի 50

ԹԺԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, պատկե-
ման Բ . կուսուցանէ իր աննման ոճով քե-
ռութեան ՈՒԹ ՄԱՍՈՒՆՔ բանին 100 մեծ եւ
ոք գեղեցիկ պատկերներու վրայ : Գին լաթակազմի
իր :

ԹԺԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հին եւ նոր Կտակարանի
ամփերազարդ . Զ. տպագրութիւն . նախնական կար-
երու համար ամփոփ գասագիրք մ'է : Գին 100 փրց :

ԳԵՂԵՑԻԿ ԶԲՈՍԱՐԱՆ տաճկախօս տղայոց , կամ
Վարժութիւն հայ խօսակցութեան եւ ընթերցման . Ա .
տարի . պատկերազարդ : Փորձով հաստատուած է թէ
մէկ տարուան մէջ տաճկախօս աղայք կը կարդան ու
կը խօսին հայերէն : Գին 100 փրց :

ԳԵՂԵՑԻԿ ԶԲՈՍԱՐԱՆ տաճկախօս տղայոց կամ
Վարժութիւն հայ խօսակցութեան եւ շարադրութեան .
Բ . տարի . պատկերազարդ : Գին 4 դրչ :

ՄԱՐՄՆԱՄԱՐ ԶՈՒԹԻՒՆ առողջապահական եւ բը-
ժըկական . արանց , կանանց եւ փոքր տղայոց . առանց
գործիք . բոլոր վարժարաններու յարմար : Զեւերը
բացատրուած են 45 պատկերներով : Գին 5 դրչ :

ՑՈՄԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Արուեստ եւ Վաճառակա-
նական զիտելիք . Յ. Գ. Փալագաչեան . պարզ եւ զիւ-
րին : Գին 6 դրչ :

ԻՐԱԴԻՏՈՒԹԵԱՆ Նոր Դասընթացք , պատկերա-
զարդ . Յ. Գ. Փալագաչեան . Ա . Տարի : Գին 3 դրչ :

7000

2013873

ՀՀ Ազգային գրադարան



NL0061321

